ԵՐՎԱՆԴ ՎԱՉԳԵՆԻ ԶԱԽԱՐՅԱՆ

Ծնվել է 1946թ. մայիսի 14-ին, Ադրբեջանական ԽՍՀ Շամխորի շրջանի Սալեր գյուղում:
1968թ. ավարտել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը:
1987-88թթ. սովորել է Մոսկվայի ժողովրդական տնտեսության ակադեմիայի կառավարման ինստիտուտում:
1991թ. Մոսկվայի Կույբիշևի անվան ինժեներաշինարարական ինստիտուտում պաշտպանել է գիտական թեզ, տնտեսական գիտությունների թեկնածու է:
1962-63թթ. աշխատել է Երևանի «Գունմետշին» տրեստում՝ որպես բանվոր:
1963-64թթ. «Հրազդանշին» ձեռնարկությունում եղել է մոնտաժող:
1966-74թթ. եղել է «Ջերմշին» շինարարական վարչության ինժեներ, տեղամասի պետ:
1974-77թթ. գլխավորել է Հրազդանի լեռնաքիմիական կոմբինատի արտադրական մասը:
1977-83թթ. եղել է «Հայոսկի» արտադրական միավորման շինարարական վարչության պետ:
1983-92թթ. աշխատել է «Հայգազշին» տրեստում՝ որպես կառավարիչ:
1992-93թթ. եղել է ՀՀ էներգետիկայի նախարարի տեղակալ:
1994-97թթ. Մոսկվայում գլխավորել է արտադրաշինարարական ընկերություն:
1997-98թթ. եղել է «Հայտրանսգազ» ՊՁ գլխավոր տնօրեն:
1998-2000թթ. ղեկավարել է ՀՀ տրանսպորտի նախարարությունը:
2000-01թթ. եղել է պետական եկամուտների փոխնախարար, վերանշանակվել է ՀՀ տրանսպորտի և կապի նախարար:
2001-02թթ. զբաղեցրել է ՀՀ պետական եկամուտների նախարարի, 2002-03թթ.՝ ՀՀ հարկային պետական ծառայության պետի պաշտոնները:
2003 թվականից մինչև 2009թ. մարտ ամիսը եղել է Երևանի քաղաքապետ:
2009թ. ապրիլի 2-ին ՀՀ նախագահի հրամանագրով նշանակվել է ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախագահ: